

«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ «ԴԵՆԴՐՈՊԱՐԿ»  
ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՋ ԱՓԻ ԳԵՏԱՓՆՅԱ  
ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԵՆԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

Կառուցապատող՝

«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հապավումներ ..... 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 3

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 5

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ..... 5

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....16

**6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....34**

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..... 40

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ..... 43

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

    ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

    ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

    ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....  

    Ճարտարապետահատակագծային առաջադրանք.....  

    Անշարժ գույքի սեփականության վկայական .....  

    Արձանագրություն

    Մասնակիցների ցանկ .....

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նախատեսվող գործունեություն	Իջևանի «Դենդրոպարկ» տարածքի՝ Աղստև գետի աջ ափի գետափնյա հատվածում հենապատի կառուցում
Ծրագրի նպատակը	Աղստև գետի ափապաշտպան հենապատի կառուցում
Կառուցապատող	«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
Փորձաքննական գործընթացի ձեռնարկող	«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
Նախագծային ծառայություններ	«Էմար փրոջեկտ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ՀՀ 0089, Կոտայքի մարզ գյուղ Ջրվեժ
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	<a href="mailto:reservepark@mnp.am">reservepark@mnp.am</a> Հեռ.՝ (374 10) 64-82-04
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Ուսանողական փողոց 90, Իջևանի «Դենդրոպարկ» ՊՈԱԿ
Հողամասի ընդհանուր մակերեսը	5.7297 հա, 11-001-0273-0008
Կառուցապատման մակերեսը	Կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 60.72ք.մ

## 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախագծի պատվիրատու և Իջևանի «Դենդրոպարկ» տարածքի՝ Աղստև գետի աջ ափի գետափնյա հատվածում հենապատի կառուցում» նախատեսվող գործունեության կառուցապատող (այսուհետ՝ Կառուցապատող) է հանդիսանում «ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ը, իսկ նախագիծը մշակող է հանդիսանում «Էմար փրոջեկտ» ՍՊ ընկերությունը:

Համաձայն նախագծի Իջևանի «Դենդրոպարկ» տարածքի՝ Աղստև գետի աջ ափի գետափնյա հատվածում նախատեսվում է կառուցել բետոնյա հենապատ՝ հեղեղումներից պաշտպանելու համար: Կառուցապատվող հողամասը գտնվում է ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Ուսանողական փողոց 90 հասցե Իջևանի «Դենդրոպարկ» 11-001-0273-0008 Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում: Հողամասը զբաղեցնում է 5.7297 հա մակերես, որտեղ բետոնյա հենապատի կառուցապատման մակերեսը ընդհանուր կազմում է 60.72ք.մ: Ըստ աշխատանքային նախագծի կառուցվող բետոնյա հենապատի երկարությունը 50.6 մ է, իսկ լայնությունը 1.2 մ: Հենապատը հողամասի նիշից ունի 0.5 մ բարձրություն, իսկ գետի մակարդակից բարձր է 2.00 մ-ից մինչև 3.00 մ: Հողամասը հանդիսանում է կառուցապատված տարածք: Տարածքին մոտեցումն ապահովվում է Ուսանողական փողոցից:

Գործունեության իրականացումն ունի բնապահպանական նշանակություն և կարևոր է շրջակա միջավայրի պահպանության /որպես հեղեղապաշտպան/, ինչպես նաև Աղստև գետի վարարումների ժամանակ հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից:

Նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել

- Իջևան համայնքի ժ/պ ղեկավարի կողմից 05.11.2021թ տրամադրված թիվ 51 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/
- Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը /հ. 07052015-11-0025 տրվ.07.05.2015թ/
- շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցումը գործունեության իրականացման վերաբերյալ:

Նախագծային լուծումները համաձայնեցվել են Շրջակա միջավայրի նախարարության հետ /ՇՄՆ/ «ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ի հետ:

ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի Ուսանողական փողոց հ. 90 Իջևանի «Դենդրոպարկ» տարածքի՝ Աղստև գետի աջ ափի գետափնյա հատվածում հենապատի կառուցումը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ որպես նախատեսվող գործունեություն ենթակա է փորձաքննության: Նշված գործունեությունը ենթակա է փորձաքննության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ-ի օրենքի Հոդված 14-ի 8-րդ մասի, այն է՝ «Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ մասում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում»: Քանի որ վերը նշված գործունեությունն իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում, հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ, որի փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով և

պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի /ՆԳՀ/ և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվության փաստաթղթերի մշակում և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից բնապահպանական պետական փորձաքննության իրականացում և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության տրամադրում:

## **2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

### **2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմը**

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

### **2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը**

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Աղստև գետի աջ ափի գետափնյա հատվածում հենապատի կառուցման աշխատանքային նախագիծը,
- Իջևանի քաղաքապետարանի կողմից նախատեսվող գործունեության համար տրված նախնական համաձայնությունը և նախագծման թույլտվությունը,
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

## **3 ՈԼՈՐՏԻՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՆՈՐՄԱՏԻՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն (2015).** 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսներ հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ հոդված 12՝ պետության խթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:

**ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** պահանջում է իրականացնել ծրագրերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, պետական փորձաքննության իրականացում և փորձաքննության գործընթացում հայտի ուսումնասիրություն արդյունքում կախված գործունեության տեսակից՝ կատեգորիայի որոշում և փորձագիտական եզրակացության տրամադրում:

**ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

**ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

**ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)** (Հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

**ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30 «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23 հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

**ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որոշում** «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբեր համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,

**ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ. թիվ 24-Ն հրաման**՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»,

### **Ուղեցույցներ և ստանդարտներ**

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2018 թ), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված «Շինարարական աղբի կառավարման» ուղեցույցները:

### **Բնապահպանական խնդիրների վերաբերյալ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են երեք հոդվածներ.**

Հոդված 10. Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերարտադրությունը և բնական պաշարների խելամիտ օգտագործումը:

Հոդված 31. Յուրաքանչյուր ոք ունի իրեն պատկանող գույքը ազատորեն տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավունք: Գույքի իրավունքը չպետք է կիրառվի շրջակա միջավայրի վրա վնաս պատճառելու կամ այլ անձանց, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի խախտման համար:

Հոդված 33.2. Յուրաքանչյուր ոք ունի իր առողջության և բարեկեցության համար բարենպաստ միջավայրում ապրելու իրավունք և պարտավոր է պաշտպանել և կատարելագործել այն անձամբ կամ ուրիշների հետ միասին: Պետական պաշտոնյաները պատասխանատվություն են կրում բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու և դրանով հասանելիության հերքելու համար:

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ Օրենքի (2014)** պահանջներին համապատասխան նախնական գնահատումը և հայտի պատրաստումը ընդգրկում են հետևյալ հիմնական գործողությունները.

(i) Ելակետային տեղեկությունների հավաքագրում՝ ծրագրային տարածքի ֆիզիկական, էկոլոգիական, սոցիալ-մշակութային և տնտեսական միջավայրի վերաբերյալ, ինչպես նաև

տեղեկատվություն նախատեսվող աշխատանքների տեխնիկական, տեխնոլոգիական լուծումների, օդագործվող բնառեսուրսների, նյութերի վերաբերյալ,

(ii) Քնարկումներ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության մասնագետների և այլ համապատասխան պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմնի հետ, ինչպես նաև հանրային լսումների կազմակերպում:

(iii) Շինարարության հետ կապված ազդեցությունների, հավանական

խնդիրների բացահայտում և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը և փոխհատուցմանն ուղղված գործողությունների մշակում,

(iv) ԲԿՊ-ի պատրաստում՝ նշելով ազդեցության ենթարկվող տարածքները, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, ազդեցությունների մոնիտորինգի մեթոդները, պատասխանատու մարմինները/անձանց, ինչպես նաև համապատասխան ծախսերը:

Ելակետային տվյալները և այլ տեղեկությունները ձեռք են բերվել հրապարակված և չհրապարակված աղբյուրներից՝ ներառյալ կլիմայի, տեղագրության, երկրաբանության և գրունտների, բուսական և կենդանական աշխարհների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և դաշտային հետազոտությունների տվյալները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը և պահպանությանը վերաբերող ազգային օրենսդրությունը ներառում է.

➤ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»

ՀՀ օրենք (2014)

➤ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N1325-N որոշում:

ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովող օրենք (1992),

➤ «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994 թ.),

➤ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),

➤ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (1998),

➤ «Բուսական աշխարհի մասին» (1999) օրենք,

➤ «Կենդանական աշխարհի մասին» օրենք (2000),

➤ «ՀՀ հողային օրենսգիրք» (1991),

➤ «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),

➤ «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002),

➤ «Թափոնների մասին» օրենք (2004),

➤ «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),

➤ «Անտառային օրենսգիրքը» (2005),

➤ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006),

➤ «ՀՀ առաջնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N-1059-Ա որոշում,

➤ «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում,

➤ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.09.2008թ.-ի N 967-Ն որոշում,

➤ «Կենսաբանական բազմազանության մասին 5-րդ և 6-րդ ազգային զեկույցները

➤ ՀՀ կառավարության «ՋՐԱԷԿՈՎԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԶՐԱՊԱՀՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 2005թ. Հունվարի 20-ի N 64-Ն որոշումը



Համապատասխան կանոնակարգերը բավարարելու և ՇՄՆ-ից փորձաքննության դրական եզրակացությունը ստանալու նպատակով, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պետք է կազմվի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /ՆԳՀ/ և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն: Սույն նախնական գնահատման հայտը պատրաստվել է ՇՄԱԳՓ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի են առնվել շրջակա միջավայրին առնչվող և պահպանությանը վերաբերող վերը նշված օրենսդրական դրույթները:

#### 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ը մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Իջևանի «Դենդրոպարկ» տարածքի՝ Աղստև գետի աջ ափի գետափնյա հատվածում բետոնյա հենապատի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի համար ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն, ինչը պահանջվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել է ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Ոսանողական փողոց 90 հասցե Իջևանի «Դենդրոպարկ» 11-001-0273-0008 Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում: Նկ.1.-ում ներկայացված է նախատեսվող գործունեության տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը:

Նախատեսվող գործունեության հողամասը գտնվում է Իջևան քաղաքի մուտքամասում, Երևանյան փողոցի աջակողմյան հատվածում՝ Աղստև գետի աջափնյա մասում: Աղստև գետի ձախափնյա մասում՝ կառուցապատվող հողամասի դիմաց Իջևանի գինու գործարանն է: Հողամասը, որտեղ իրականացվելու է գործունեությունը, կառուցապատված է: Տարածքն ապահովված է ինժեներական ենթակառուցվածքներով /էլեկտրամատակարարում, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցեր/:

Հողամասի հարևանությամբ, Աղստև գետի ձախափնյա մասում Իջևանի գինու գործարանն է: Հողամասին մոտեցումն ապահովված է առկա ճանապարհներով: Հողամասը զբաղեցնում է 5.7297 հա մակերես, որտեղ բետոնյա հենապատի կառուցապատման մակերեսը ընդհանուր կազմում է 60.72ք.մ: Ըստ աշխատանքային նաժիսագծի կառուցվող բետոնյա հենապատի երկարությունը 50.6 մ է, իսկ լայնությունը 1.2 մ: Հենապատը հողամասի նիշից ունի 0.5 մ բարձրություն, իսկ գետի մակարդակից բարձր է 2.00 մ-ից մինչև 3.00 մ: Հողամասը հանդիսանում է կառուցապատված տարածք: Տարածքին մոտեցումն ապահովվում է Ոսանողական փողոցից: Կառուցապատվող տարածքում բացակայում են հենապատի կառուցման շինարարական աշխատանքներին խոչնդոտող ինժեներական ցանցերը և ենթակառուցվածքները: Շինարարական աշխատանքների կատարման համար կօգտագործվեն հարևանությամբ առկա ենթակառուցվածքները, որոնք սպասարկում են Իջևանի գինու գործարանին:

Հենապատի կառուցման տարածքում բացակայում են նաև հատման ենթակա ծառերը, թփերը, հողային ծածկույթը և բուսահողը, քանի որ տարածքը գտնվում է Աղստև գետի գետափնյա մասում՝ ջրածածկվող գոտում:

Շինարարական աշխատանքների տևողությունը գնահատվել է 3 ամիս, որից հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի գնահատվել է 15 օր: Առաջացող հողային զանգվածները գնահատվում են ստորև ներկայացվող ծավալներով.

- *հեռացվող գրունտ/հանույթ՝ 150 խ.մ, որում բացակայում է բուսահողը, քանի որ տարածքը գետափնյա է և գտնվում է ջրածածկվող գոտում:*
- *տեղափոխվող և թափոնակույտվող հանույթ՝ բացակայում է:*,
- *հետլիցք՝ 150 խմ:*

Հենապատի հողային աշխատանքների ժամանակ տեղափոխման ենթակա մնացորդային գրունտ չի առաջանում: Գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթները ժամանակավոր կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում՝ հետագայում ամբողջությամբ օգտագործվելու է հետլիցքի համար:

Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել Իջևան համայնքի Ժ/պ ղեկավարի կողմից 05.11.2021թ տրամադրված թիվ 51 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը /հ. 07052015-11-0025 տրվ.07.05.2015թ/;

Հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը, կամ հողատեսքը՝ բնապահպանական: Հենապատի կառուցման տարածքում բացակայում են հատման ենթակա ծառերը կամ թփերը:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հաում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Հենապատի կառուցման հողային և բետոնային աշխատանքների ընթացքում Աղստև գետին հասցվող վնաս, գետի աղտոտում,
- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը և օբյեկտներին պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,
- շինարարական աշխատանքների ընթացքում հողային ծածկույթի, բուսածածկի վնասում,
- Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարության ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,
- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ շինարարական աշխատանքների ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի

մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.


- Կառուցապատման նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում Իջևան համայնքում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Իջևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են առաջին հանրային քննարկումները:

Նկ.1 Կառուցվող հենապատի տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը:



ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՎՈՐՈՒՄ



**Կառուցվածքի տեխնիկափորձական ցուցանիշներ**

- **Հողամասի մակերես՝ 5. 7297 հա**
- **Կառուցապարման մակերես 60.72 քմ**
- Հողային աշխատանքների ծավալները ներկայացնում են՝**
  - **Հանվող հողային զանգված – 150 խմ**
  - **Հեփիցք՝ 150 խմ,**
  - **Մնացորդային զանգվածը բացակայում է:**

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով հաշվարկված է շինարարության տևողությունը:

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և Շինությունների Հրդեհային Անվտանգություն

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

**3.1 Շինարարական աշխատանքների կազմակերպում**

Իջևանի «Դենդրոպարկ» տարածքի՝ Աղստև գետի աջ ափի գետափնյա հատվածում բետոնյա հենապատի կառուցման աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Բետոնային աշխատանքներ

Շինարարական աշխատանքների տևողությունը ընդհանուր կկազմի 3 ամիս, որից նախապատրաստական աշխատանքների տևողությունը կկազմի 15 օր:

Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է կազմակերպել շինհրապարակ՝ անհրաժեշտ ենթակառուցյուններով:

**Նախաշինարարական աշխատանքների փուլում,** համաձայն շինաշխատանքների կազմակերպման նախագծի, կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես նախագծվող հողատարածքի վարչական սահմանների ներսում, որտեղ կտեղադրվեն ժամանակավոր կառույցներ և կապահովվեն շինարարական հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն): Գրունտի ժամանակավոր պահման համար շինհրապարակում կնախատեսվեն կուտակման վայրեր, իսկ շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիների և դրանց երթևեկության համար կսահմանվեն միջոցառումներ:

**Հիմնական աշխատանքների փուլում** իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- **Շինարարական/մոնտաժման աշխատանքների** իրականացում, որի ժամանակ կիրականացվեն հենապատի կառուցման\_\_\_ շինարարական աշխատանքները:

Հիմնական փուլում կատարվում է կառույցի շինարարություն ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՍՄԻՊ III-IV. 2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակում ոչինչ չի պատրաստվում, ամեն ինչ բերվում է պատրաստի վիճակում, մասնագիտացված կազմակերպություններից: Շինհրապարակում ոչինչ չի պահեստավորվում: Առաջացող բոլոր տեսիլ թափոնները և շինարարական աղբը տեղափոխվելու են համապատասխան աղբավայրեր, կամ հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպությունների, կրկնակի օգտագործման համար:

Շինհրապարակի տարածքից անձրևաջրերը կազմակերպված եղանակով կհեռացվեն տարածքում առկա հեղեղատար կոյուղու համակարգ՝ բացառելու նպատակով Աղստև գետ հեռացումը:

Ժամանակավոր շինությունների պետք է հնարավորինս հասցնել նվազագույնի, հաշվի առնելով այն, որ շինհրապարակը գտնվում է Իջևանի «Դենդրոպարկի» տարածքում: Առաջարկվում է նախատեսել կոնտեյնների տիպի հատուկ շինություն՝ որը կծառայի աշղեկի սենյակ, գործիքների պահեստ, մեխանիկական արհեստանոց, կիսափակ պահեստ:

Շինհրապարակում նախատեսվում է կազմակերպել սանիտարահիգիենիկ նշանակության հարմարանք /բիոզուգարան/ օբյեկտի վերաբերյալ տեղեկատու ցուցանակ, անվտանգության նշանների ցուցատախտակ, մեքենաների անվադողերի լվացման կետ, պահակակետ, պահեստավորման հարթակ, հակահրդեհային միջոցների

վահանակ և աղբաման՝ կկենցաղային աղբի հեռացման համար, որը կտեղադրվի ջրածածկից հեռու տարածքում:

### **Հողային աշխատանքներ**

Շինարարական աշխատանքների տևողությունը գնահատվել է 3 ամիս, որից հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի գնահատվել է 15 օր: Առաջացող հողային զանգվածները գնահատվում են ստորև ներկայացվող ծավալներով.

- *հեռացվող գրունտ/հանույթ՝ 150 խ.մ, որում բացակայում է բուսահողը, քանի որ տարածքը գետափնյա է և գտնվում է ջրածածկվող գոտում:*

- *տեղափոխվող և թափոնակույտվող հանույթ՝ բացակայում է:*,

- *հեղիցք՝ 150 խմ:*

Հողային աշխատանքների ընթացքում տեղափոխման ենթակա մնացորդային գրունտ չի առաջանում:

Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենա-սարքավորումները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն: Տեղամասի հողային աշխատանքները կիրականացվեն հիմնականում մեքենայացված եղանակով (KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատոր), իսկ դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից և շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը առաջարկվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Առանձին ամրանային ձողերը, կաղապարները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն շինարարական հրապարակ անմիջապես օգտագործման համար՝ բացառելով դրանց պահեստավորումը և տեղադրումը տեղում:

- Բետոնային խառնուրդը, ինչպես նաև շաղախը շարվածքի համար կառաքվի անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով Իջևան քաղաքին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

- Շինարարական նյութերը կարող են առաքվել շինհրապարակ անմիջապես օգտագործման նպատակով:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) չեն պահեստավորվի, կամ կարճաժամկետ կպահվեն պաստառներով ծածկված վիճակում:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել անմիջապես տարածքում առկա՝ Իջևանի գինու գործարանին պատկանող ջրագծից:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը կիրականացվի Իջևան քաղաքի մեքենայացման բազայում:

Շինարարական աշխատանքների ընթացքում վտանգավոր թափոնների առաջացումը և հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով շինարարության

ընթացքում քայուղերը, հեղուկ վառելիքը կպահվեն փակ տարաներով անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), բացառելու նպատակով Աղստև գետի և շրջակա տարածքների հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Հենապատի կառուցման շինարարական աշխատանքներում աշխատողների միջին թիվը՝ ըստ ՇԿՆ-ի, հաշվարկվել է 20 մարդ, որից ինժեներական կազմը՝ 3 մարդ, բանվորներ՝ 17 մարդ:

**Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

*Բերրոնյա հենապատի* կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում է պատրաստի բետոն, կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակին մոտեցող տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրամատակարարումն իրականացվելու է Իջևանի գինու գործարանի գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին: Իսկ կոյուղին միացված է քաղաքային կոյուղատարին: Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ:

Շինարարական մեքենասարքավորումների անվանացանկը ներկայացված է Աղ.3-ում ստորև.

**Աղ. 3 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը:**

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	Hyundai 170W-7	1
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	Տոփանիչ	CR 3/60	4
6	Գույքային կաղապարամած	կոմպլ.	4
7	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	4
8	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	4
9	Փոխարկիչ թրթրիչների համար	ИВ-4	4
10	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2
11	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	4
12	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
13	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով
14	Ինքնաթափ ավտոմոբիլ	МА3-5550	հաշվարկով

## 5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### 5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Իջևանը քաղաքը գտնվում է Աղստև գետի երկու ափերին՝ Իջևանյան լեռնաշղթայի ստորոտին՝ ծովի մակարդակից 700մ բարձրության վրա: Քաղաքը Երևանից գտնվում է 142 կմ հեռավորության վրա: Իջևանը շրջապատված է լեռներով՝ պատված սաղարթախիտ անտառներով, որոնց տեղ-տեղ փոխարինում են ալպիական մարգագետինները:

Իջևանում, ինչպես նաև հարակից բնակավայրերում, կլիման բավականին մեղմ է. ամռանը ոչ շատ շոգ է, իսկ ձմռանը՝ ոչ սաստիկ ցուրտ: Օդի միջին ջերմաստիճանը օգոստոսին կազմում է մոտ 23 °C, հունվարին՝ մոտ 0 °C, տարեկան տեղումների քանակը՝ 563 մմ:

Իջևանի տեսարժան վայրերից են կենտրոնական զբոսայգին, բուսաբանական այգին (Դենդրոպարկը), Իջևանի պատմաերկրագիտական թանգարանը և այլն: **Իջևանի ծառայգի/դենդրոպարկը** գտնվում է **Իջևան** քաղաքում, **Աղստև** գետի աջ ափին՝ գետի հին հունի տեղում, որը ծածկված է հողի շերտով: Իջևանի Դենդրոպարկը շքեղ է տարվա ցանկացած եղանակին: Սա հիանալի վայր է ընտանեկան հանգստի համար: Հաճելի կլիմայական պայմանների շնորհիվ տուրիստական բարձր սեզոնը Հայաստանում բավականին երկար է տևում: Մարտից մինչև խոր աշուն օրերը տաք են, ձմեռը սովորաբար երկար չի տևում: Տեղումների արտահայտված սեզոնը փոփոխական է: Դեպի Իջևանի դենդրոպարկ տուրերի սեզոնայնությունը կախված է եղանակային պայմաններից: Այն հրաշք վայր է Հայաստանում, որտեղ կարող ես հիանալ բնության հիասքանչ գեղեցկությամբ և վայելել եզակի ծաղիկների բույրով հագեցած մաքուր օդը: Յուրաքանչյուր տարի Իջևանում տեղի է ունեցել ճարտարապետների միջազգային գիտաժողով, որի արդյունքում ստեղծված գործերը տեղադրված են կենտրոնական զբոսայգում:

### 5.2 Ռելիեֆը

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գուգարաց լեռների Հյուսիս-արևելյան ճյուղավորում հանդիսացող Մթնասարի լեռների հյուսիս-արևելյան՝ դեպի Աղստևի հովիտ իջնող լանջերին:

Տարածքին բնորոշ է ֆիզիկական հողմնահարումը, որն ուղեկցվում է փլվածքներով և քարաթափումներով: Ռելիեֆի մասնատվածությունն ու ակտիվ դենուդացիան պայմանավորված են ապարների լիթոլոգիական առանձնահատկություններով և Չքնաղ լեռան անտիկլինալի բարձրացման աշխուժացումով: Տեղանքի լանջերն ունեն հարավ-արևելյան թեքություն (10-15°), խոնարհվում են դեպի Աղստևի հովիտ:

Մորֆոլոգիան պայմանավորված է հողմահարման նկատմամբ չափազանց կայուն ապարների առկայությամբ, որոնք ներկայացված են՝ անդեզիտային պորֆիրիտներով և տեղանքում աչքի են ընկնում ցցված ռելիեֆի ձևերով:


Տարածաշրջանը գտնվում է ծովի մակերևույթից 700մ բարձրության վրա:

Շրջանի մակերևույթի թեքությունների և երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները բերված են ստորև:





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



### 5.3 Սեյսմիկ բնութագրերը

ՀՀ տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային խոշոր սալերի բախման գոտում ինչով և պայմանավորված է տարածաշրջանի բարձր սեյսմիկությունը [4, 8]:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի համաձայն տեղամասի տարածքը գտնվում է սեյսմիկ 1-ին գոտում ( $\alpha=0.3g$ ) 9 բալլ սեյսմիկությամբ իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների Նոյն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների:

### ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԻՆԵՐ

Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝  $A$ , ազատ անկման  $g$  արագացման մասերով

Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ 50 տարում առավելագույն հորիզոնական արագացումների գերազանցման 10% հավանականությամբ



**ՍԵՅՄՄԻԿ ԳՈՏԻՆԵՐ**

Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A, ազապ անկման g արագացման մասերով

A=0,3g	
2 A=0,4g	
3 A=0,5g	

«Արտակարգ իրավիճակների նախարարի 12 02 2013թ N 100-Ն հրամանով սահմանվում է սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կազմակերպման և իրականացման դրույթները, համաձայն որոնց կազմվում են սեյսմիկ ռիսկի գնահատման քրտեզներ, որոնք դրվում են մարզերի և համայնքների զարգացման ծրագրերի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման հիմքում և կիրառվում են տարածքների, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների պլանավորման, արտակարգ իրավիճակների կառավարման և նրանց հետևանքների վերացման համար:

**5.4 Սողանքներ**

Սողանքների տարածումը պայմանավորված է ռելիեֆի թեքությամբ և երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով:

Սողանքների տեղաբաշխվածությունը, ձևաբանություն ու առաջացման պայմանները երկար տարիներին ուսումնասիրվել և ուսումնասիրվում են, քանի որ դրանք լուրջ վտանգ են ներկայացնում տրանսպորտային ճանապարհների և բնակչության համար:


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սողանքների մեծ մասը տեխնածին է: Դրանց առաջացման պատճառ է հանդիսացել մարդու գործունեությունը: Մարդու կողմից խախտվում է լանջերի դարերով ձևավորված բնական հավասարակշռությունը, ինչն էլ նպաստում է սողանքների ակտիվացմանն ու նոր սողանքների առաջացմանը:

Ինչպես տեսնում ենք բերված տվյալներից սողանքներն ավելի շատ տարածված են ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում: Ինչն հիմնականում պայմանավորված է ռելիեֆի թեքությամբ, էրոզիայի մակարդակով, երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով և լեռնային ապարների ֆիզ-մեխանիկական հատկություններով:

Հետազոտություններ արդյունքների և գրականության տվյալների համաձայն : Ուսումնասիրվող տարածաշրջանում սողանքային մարմիններ կամ սողանքածին երևույթներ առկա չեն, իսկ աշխատանքների ընթացքում սողանքների առաջացման ռիսկերը բացակայում են:

Գուգարաց լեռնաշղթայի հարավային մասից սկսվում և մինչև Իջևան է ձգվում Հովքի կամ Իջևանի /Կայենի/ լեռները, որը մասնատված է մի շարք սողանքներով, որոնք ավելի ակտիվ են դեպի Աղստևի հովիտ իջնող լանջերին:

Անմիջապես դիտարկվող տարածքում վտանգավոր սողանքային մարմինները բացակայում են: Առանձին դեպքերում հանդիպում են գրունտների դեֆորմացիաներ, որոնք պայմանավորված են կավային գրունտներով:



**Սողանքների քարտեզ-սխեմա [7]**


### 5.5 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

Շրջանի կլիման չափավոր մայրցամաքային է՝ բնութագրվում է չոր և շոգ ամառով, կարճատև ձյան ծածկույթով և տաք ձմեռով: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը  $+10.8^{\circ}\text{C}$  է, ամենաբարձրը  $+39^{\circ}\text{C}$ , ամենացածրը  $-19^{\circ}\text{C}$ : Իջևանի հիդրոմետ կայանի տվյալներով բազմամյա միջին տարեկան տեղումների քանակը տատանվում է 339-688մմ սահմաններում, միջինը կազմելով 571մմ:

Շրջանում մթնոլորտային տեղումները տարվա ընթացքում հիմնականում հավասարա-րաչափ է բաշխվում, որն էլ ապահովում է ստորերկրյա ջրերի մշտական սնուցումը: Տեղումները հիմնականում անձրևի տեսքով են, հաճախ էլ լինում են հորդառատ:

Տարածաշրջանում գարունը երկարատև է առատ խոնավությամբ, կեսօրից հետո հաճախ գերիշխում են հորդառատ անձրևները: Ձմեռը կարճատև է: Կայուն ձյան ծածկույթը հաստատվում է դեկտեմբերի վերջերին և հունվարի սկզբներին: Ձնհալքը վերջանում է մարտի վերջին, երբեմն ապրիլի վերջին: Ձյան ծածկի հաստությունը կազմում է 5-10սմ հովիտներում, իսկ բարձրադիր մասերում՝ 15-20սմ, հաճախ նաև ավելի:

Ըստ Իջևանի մետրոլոգիական կայանի տվյալների տարվա մեջ ձնածածկույթ օրերի քանակը 37 օր է, ձյան առավելագույն տասնօրյակային բարձրությունը՝ 33սմ: Ստորև բերված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը:



**Կլիմայական գոտիավորման սխեման:**

Շրջանի կլիմայական բնութագրերը «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն, բերված են 3-7 աղյուսակներում համաձայն «Հիդրոտեքնաբանության և մոնիթորինգի պետական ծառայության» ՊՈԱԿ-ի Իջևանի դիտակայանի տվյալների՝ 30 տարվա ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 3

Օդի բնութագրիչ ջերմաստիճանները °C

Ըստ ամիսների												ՄՏ*	ԲՆ	ԲԱ
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
0.6	1.5	4.6	10.1	14.6	17.9	21.2	21.0	17.0	11.6	6.6	2.6	10.8	-19	39

\*ՄՏ-միջին տարեկան, ԲՆ – բացարձակ նվազագույն, ԲԱ – բացարձակ առավելագույն

Աղյուսակ 4

Օդի հարաբերական խոնավությունը, %

Ըստ ամիսների												ՄՏ
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
67	69	71	69	75	72	68	68	71	75	73	69	71

Աղյուսակ 5

Մթնոլորտային տեղումներ, մմ

Ձնածածկույթ			Տեղումների քանակը, միջին ամսեկան/առավելագույն օրական											
ՏԱ Բ* մմ	Տ Ձ Օ Ք	ՁՄ Ջ ԱՔ	Ըստ ամիսների											
			I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII

33	37	65	22/ 28	30/ 31	45/ 29	63/ 41	100/ 46	98/ 63	58/ 92	39/ 71	40/ 41	47/ 46	36/ 32	22/ 24
*ՏԱԲ – տասնօրյակային առավելագույն բարձրությունը, ՏՁՕԲ – տարվա ձնածածկ օրերի քանակը, ՁՄՋԱԲ – ձյան մեջ ջրի քանակը														

Աղյուսակ 6

**Քամիների բնութագիրը**

Միջին տարեկան	Ամիսներ	Կրկնելիությունն ըստ ուղղությունների, % / միջին արագությունը, մ/վ							
		Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ
931.9	հունվար	28/1.4	2/1.2	1/1.4	2/3.4	54/3.4	10/3.1	2/2.5	1/1.4
	ապրիլ	44/1.9	3/1.8	2/1.4	2/1.9	38/2.0	7/2.1	2/2.1	2/1.9
	հուլիս	39/2.0	3/1.9	2/1.4	2/1.6	41/1.2	8/1.5	3/1.4	2/2.1
	հոկտեմբեր	36/1.6	3/1.6	2/1.0	2/1.5	16/1.7	8/2.1	1/1.8	2/1.5

Աղյուսակ 7

**Արևափայլի տևողությունը**

Տևողությունն ըստ ամիսների, ժամ												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
124	118	132	143	173	206	200	183	171	145	111	112	1818

**5.6 Օդային ավազան**

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Իջևան համայնքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալները բացակայում են:

ՀՀ բնակավայրերում (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքների հաշվարկները կատարվում են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

Հաշվի առնելով այն, որ Իջևան համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները: Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար <<Էկոմոնիթորինգ>>-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց:

Համաձայն վիճակագրական տեղեկագրի՝ Իջևան համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 20 800 մարդ (2015թվականի դրությամբ): Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ. 4),

Իջևան համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. *փոշու մասնիկներ՝ 0,3 մգ/մ<sup>3</sup>, ածխածնի օքսիդ՝ 0,8 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ<sup>3</sup> և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ<sup>3</sup>*: Նշված մակարդակները չեն գերազանցում ՀՀ ազգային նորմերը (ՀՀ կառավարության որոշում 160-Ն, 2006 թ.), բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները:

*Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը (2015թ.-ի մարդահամար):*

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ <sup>3</sup> )			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	<b>0,2</b>	<b>0,02</b>	<b>0,008</b>	<b>0,4</b>

### 5.7 Զրային ռեսուրսներ

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Շրջանի գետային ցանցը պատկանում է Քուռ գետի ավազանին, որտեղ գլխավոր ջրային արտերիան Աղստև գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի Թեժլեռ գագաթի հյուսիս-արևմտյան 2985մ բարձրության լանջից, ունի հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղություն և բաժանում է Փամբակի ու Խալաբի լեռնաշղթաները: Սկզբում այն մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով, դառնում է ջրառատ գետ: Այն անդրսահմանային գետ է, երկարությունը 133կմ է, ջրհավաք ավազանը 2500կմ<sup>2</sup>: Հայաստանի տարածքում երկարությունը 99 կմ է ջրհավաք ավազանը 1730կմ<sup>2</sup>: Զրի ծախսը 8.22մ<sup>3</sup>/վրկ է, հոսքը 256 մլն.մ<sup>3</sup>: Այն թափվում է Քուռի մեջ: Սնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից՝ Վտակներից հայտնի են Բլղանը, Հաղարծինը, Սառնաջուրը, Պայտաջուրը, Գետիկը և Ոսկեպարը: ՀՀ տարածքում Աղստևի վրա կառուցված է Ջողազի ջրամբարը, իսկ գետի ստորին հոսանքում (Արդրբեջանի տարածքում)՝ Աղստևի ջրամբարը: Գետի խորությունը մեծ չէ, սակայն գարնանային վարարումների ժամանակ դառնում է վտանգավոր:

Բազմամյա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Աղստև գետի ջրերի ջերմային ռեժիմը չի շեղվում ընդհանուր օրինաչափությունից, այսինքն ջրի նվազագույն ջերմաստիճանները (0,5°C,) նկատվել են գետերի վերին հոսանքներում, իսկ առավելագույն ջերմաստիճանները նկատվել են գետերի ստորին հոսանքներում (20,4°C) : Ուսումնասիրություններից պարզվել է, որ Աղստև գետի ջրերում pH-ը գտնվում է հիդրոբիոնոտների մեծ մասի զարգացման համար օպտիմալ սահմաններում: Ըստ pH-ի արժեքի Աղստև գետի ջրերը պատկանում են չեզոք, թույլ հիմնային և հիմնային ռեակցիա ունեցող ջրերի դասին: Միջավայրի չեզոք և թույլ հիմնային ռեակցիայի դեպքում գետերի ջրերում առկա են Ca(HCO<sub>3</sub>)<sub>2</sub> և Mg(HCO<sub>3</sub>)<sub>2</sub> աղեր, իսկ միջավայրի հիմնային ռեակցիայի դեպքում՝ Na<sub>2</sub>CO<sub>3</sub> կամ NaHCO<sub>3</sub> աղեր:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով: ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը Աղստև գետի ջրերի մոնիտորինգ իրականացնում է չորս դիտակետերում: Դրանցից քաղցրահամ ջրերի տեղամասին ամենամոտը N17 դիտակետն է, որը գտնվում է Իջևան քաղաքից 1կմ հոսանքով ներքև: Ըստ N17 դիտակետում կատարված ուսումնասիրությունների՝ ջրի որակը «միջակ» 3-րդ դասի է, պայմանավորված երկաթի և կախյալ նյութերի բարձր պարունակություններով:

Դիտարկվող տարածքը գտնվում է Աղստև գետի ձախափնյա լանջերին: Ստորև բերվում են Աղստև գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրերը, միջին տարեկան առավելագույն և նվազագույն ծախսերը:

*Աղյուսակ 8*

Աղստև գետի միջին տարեկան բնութագրերը

Գետը	Ծախսը, մ3/վ	Տարեկան հոսքը, մլն.մ <sup>3</sup>	Հոսքի մոդուլը,լ/վ կմ <sup>2</sup>	Հոսքի շերտի բարձրությունը,մմ	Հոսքի գործակիցը
Աղստև	9.18	290	7.24	228	0.34

**5.8 Հողային ռեսուրսներ և հողօգտագործումը**

Կառուցապատվող տարածքն ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի /հ. 07052015-11-0025 տրվ.07.05.2015թ/ հանդիսանում է Բնապահպանության նախարարության «ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով ամրացված գույք: Բետոնյա հենապատը նախատեսվում է կառուցել Իջևանի Դենդրոպարկի տարածքում, որը զբաղեցնում է 5.7297 հա մակերես: Հողամասում բետոնյա հենապատի կառուցապատման մակերեսը ընդհանուր կազմում է 60.72ք.մ:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը, կամ հողատեսքը՝ բնապահպանական: Կառուցապատվող տարածքում բացակայում են հենապատի կառուցման շինարարական աշխատանքներին խոչնդոտող ինժեներական ցանցերը և ենթակառուցվածքները: Կառուցապատվող տարածքում բացակայում են հատման ենթակա ծառերը, թփերը, նաև հողային ծածկույթը և բուսահողը, քանի որ տարածքը գտնվում է Աղստև գետի գետափնյա մասում՝ ջրածածկվող գոտում:

Հենապատի կառուցման նախագիծը ենթադրում է շատ փոքրածավալ հողային աշխատանքների իրականացում, որը ներառում է 150 խմ/ ծավալով գրունտի հանույթի աշխատանքներ, որն ամբողջովին օգտագործվելու է հետլիցքի համար և հեռացման ենթակա չէ: Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Հենապատի հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթները ժամանակավոր կուտակվելու են կազմակերպված շինարարական իրապարակի տարածքում՝ հետագայում ամբողջությամբ օգտագործվելու է հետլիցքի համար:

**Տարածաշրջանի հողային ծածկույթը.**

Դիտարկվող տարածաշրջանում տարածված են անտառային գորշ և դարչնագույն հողերը: Դարչնագույն անտառային հողերն ունեն գլխավորապես կավազային մեխանիկական կազմ: Անցողիկ և ստորին հորիզոններում նկատվում է կավային ֆրակցիայի կուտակում՝ ֆիզիկական կավը հասնում է մինչև 40%: Անտառային դարչնագույն հողերը տարածված են 700-1500մ սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում:

Կլանված կատիոնների կազմում գերակշռում է կալցիումը: Ռեակցիան չեզոք է, բնորոշվում են լավ արտահայտված ստրուկտուրայով: Անտառից ազատ, բացատային հատվածներում դարձնագույն հողերը տափաստանացված են, մակերեսից ունեն փոշե-հատիկային և փոշե-կնձկային ստրուկտուրա: Մեխանիկական կազմը կավավազային է, հումուսի պարունակությունը միջինը կազմում է 4,7%: Բերրի շերտի միջին հզորությունը 0,35մ:

Գորշ անտառային հողերի ամբողջ պրոֆիլին բնորոշ է գորշ դարչնագույն գունավորում, ծագումնաբանական հորիզոնների թույլ տարբերակում, ընկուզանման և ընկուզակնձկային ստրուկտուրա: Հողի կտրվածքի միջին և ներքին մասերում գլեյացման երևույթներ, կարբոնատները լվացված են: Ընդհանուր ազդու պարունակությունը կազմում է 0,21%: Բերրի շերտի միջին հզորությունը 0,4մ:

Հարավային շրջաններում՝ Աղստև գետի հովտում ձգվում են գետահովտադարավանդային մարգագետնացված կոպճային հողատեսակներ:

Հողերի ընդհանուր բնութագրիչները բերված են աղյուսակում:

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	CO <sub>2</sub> , %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Տիպիկ դարչնագույն անտառային	0-14	9.9	չկա	39.2	6.9
	14-35	3.4	3.1	35.1	7.5
	35-50	1.0	4.0	34.8	8.2
	50-94	0.9	3.9	33.8	8.2
	94-115	0.8	2.4	16.9	8.2
	115-145	0.7	7.3	17.8	8.3
Կարբոնատային դարչնագույն անտառային	2-16	10.8	1.9	22.8	7.8
	16-31	4.5	5.2	15.6	8.0
	31-43	2.5	7.5	17.0	7.5
	43-120	1.2	8.9	19.8	7.9
Լվացված դարչնագույն անտառային	0-10	14.1	չկա	40.3	6.6
	10-26	3.7	չկա	39.1	6.7
	26-49	2.2	չկա	33.4	6.5
	49-64	1.4	չկա	38.6	6.8
	64-85	1.4	չկա	37.6	7.7
	85-107	0.8	չկա	38.9	7.3

Գետահովտադարավանդային հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա:



Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6%: Հողայն լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (15-25 մ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Գործունեության և նրա հարակից շրջաններում հիմնականում տարածված հողատեսակը անտառային դարչնագույն տիպն է մնացորդային կարբոնատային, թեթև-միջին կավ-ավազային, կրա-կավային և կավային ենթատիպի հողատեսակներով: Հողի էռզիան գնահատված է 1-ին գարգի՝ մինչև 1%:

Տարածքը աղտոտված չէ ծանր մետաղներով և ներկայումս դիտարկվող տարածքը վերագրվում է ոչ աղտոտված տարածքներին:

## 5.9 Կենսաբազմազանություն

ՀՀ Տավուշի դիտարկվող շրջանը մտնում է Իջևանի ֆլորիստական շրջանի մեջ, որտեղ հիմնական բուսական տիպը անտառայինն է: Փոքր տարածքներ են զբաղեցնում չոր, նոսր անտառները և ենթալայան համակեցությունները: Ֆլորիստիկ շրջանում հանդիպում են բուսականության 45 ընտանիքի 160 տեսակներ, որոնցից 77-ը ծառեր են, 51-ը թփեր և 32-ը կիսաթփեր ու լիանաներ:

Անտառ կազմող գլխավոր ծառատեսակներն են Արևելյան հաճարենին, Վրացական, Մեծառեջ, Արաքսային կաղնիները, Արևելյան և Սովորական բոխիները, Բարձրաբուն հացենիները, Բեզոնիան, Տերև լորենին: Անտառային խառը մշակաբույսեր՝ պալասի և Բրանքսի սոճիների, Բարձրաբուն հացենու, Դժնիկանման չիչխանի, ուռենու, թխկու, թեղու ցեղատեսակների հետ համատեղ:

Դիտարկվող տարածքի արևելյան և հարավային շրջաններում տարածված են լայնատերև անտառներ (հաճարենու, բոխու, լորենու և կաղնու) և քսերոֆիլ նոսրանտառային բուսականություն (խնկենի, Ասպիրակ աղեղնաեզր և այլն):

Մարզում անհետացող և հազվադեպ բուսատեսակներն են՝ խոլորձ ծիրանի, Թաղաղու դեղին, Ստևենիելա սաճիրանման, Խուրմա կովկասյան, Կռոն փետրավոր, դրանք տարածված են Վազաշեն-Ազատամուտ հատվածում [34]:

Բուսականության հիմնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը բերված է ստորև:

### Լայնատերև ծառատեսակներ



Բոխի (*Carpinus orientalis* )



Հացենի (*Fraxinus excelsior*)



Հաճարենի արևելյան (*Fagus orientalis*)

**քերոֆիլ նոսրանտառային բուսականություն:**



**Նկ.12: Խնկենի (*Pistacia mutica*)**



**Ասպիրակ աղեղնատեր (*Spiraeae crenata*)**

**Կենդանական աշխարհ**

Տարածաշրջանի կենդանական աշխարհը հարուստ է: Անտառային կաթնասուններից բնորոշ են այծյամները, կինճը, արջը, հանդիպում է անտառային կատու: Այս տարածքում բնակվում են ազնվացեղ եղջերուն, վայրի խոզը, եվրոպական այծյամը: Տարածքում հանդիպում է նաև գորշ արջ, շնագայլ, անտառային կատու, նապաստակ, սկյուռ:

Շատ են տարածված կրծողները (դաշտամուկ, սկյուռ, քնամուկ), միջատակերեից՝ սրնչակը: Կան նաև խլորդներ: Անտառը հարուստ է թռչուններով՝ շիկահավ, կարմրատուտ, սև արոս, երաշտահավ և այլն:

Տավուշի մարզում թռչունների տեսակների կազմը ևս բազմազան է: Ընդհանուր թռչնաշխարհը 178 տեսակ է, որից անտառային՝ 67, լեռնատափաստանային՝ 53, ջրաճահճայիններ՝ 31, Սինանտրոպ՝ (մարդու հարևանությամբ) 17: Ըստ վարքագծի՝ նստակյացներ՝ 104, բնադրող չվողներ՝ 59, ձմեռողներ՝ 10, ձվահյութ՝ 5: Կարմիր գրքում գրանցվածներ տեսակները 17-ն են: Տավուշի մարզի թռչնաշխարհը հիմնականում ձևավորվում է անտառային ու լեռնատափաստանային տեսակների հաշվին՝ 123 տեսակ [35-40]:

Ծառերին և թփերին հանդիպում են երաշտահավեր, կեռնեխներ, սիտեղ, գեղգեղիկ, ոսպնուկ, արշալուսիկներ, եղնջաթռչնակ ու արքայիկներ, բվեր ու բվեճ, կարմրաճակատ փայտփորի տեսակներ:

Տավուշի մարզում ջրաճահճային տեսակներից հանդիպում են փոքր ու մեծ սուզակ, կոնչան բադեր, սև փարփարներ, հայկական որոր, սպիտակ տառեղ, գետածիծառներ, ավազակտցար:

Ժայռաբնակ տեսակներից հանդիպում են՝ բազե, ճուռակներ, կեռնեխներ կապույտ, մանգաղաթևեր, ծիծեռնակների 6-3 տեսակներ, օձակեր արծիվ, կչետակեր, գառնանգղ և այլն:

Մարզի տարածքում կարմիր գրքային կենդանիներից հանդիպում են՝ միջերկրածովյան կրիա, սև անգղ, սափսան, սովորական ծառագորտ, ճահճային կրիա, պոլցոկ քնամուկ, կովկասյան կամ պարսկական սկյուռ, միջատներից՝ ալպիական ռոզալիա:

Դիտարկվող տարածքի կենդանական աշխարհի ուսումնասիրություններն իրականացվել են ծանոթանալով առկա գրականությանը, տեղեկատվությունը ստացվել են նաև տեղի մասնագետների, որսորդների հետ խորհրդակցելով: Տարածքի կաթնասունների տեսակը որոշվել է ակնադիտական եղանակով, սննդի մնացորդների և կղանքի հետքերով: Թռչունները որոշվել են ակնադիտորեն և արձակված ձայներով: Սողուններն ու երկկենցաղները անմիջական դիտարկմամբ:

Կաթնասուններից առավել հաճախ հանդիպել է **աղվեսը (*Vulpes vulpes*):**

**Նապաստակը (*Lepus europaeus*)** նույնպես հաճախ է հանդիպում, գրանցվել է հարևանությամբ առկա անտառային տարածքներում:

**Գայլ (*Canis lupus*)** չի հանդիպել, սակայն հետքերը վկայում են դրա գոյության մասին:

Պարբերաբար հանդիպում են **սովորական** և **թփուտային** դաշտամուկ, բները հանդիպում են հացահատիկա-տարախոտային բուսականությամբ պատված վայրերում:

Ուսումնասիրված շրջանում գրանցվել են հետևյալ Թռչունները՝

1. Սովորական կաչաղակ – *Pica pica*:
2. Գյուղական ծիծեռնակ– *Hirunda rustica*, Իջևան քաղաքի, Սևքար և Սարիգյուղ գյուղերի շրջանում:
3. Քաղաքային ծիծեռնակ – *Delichea urbica*: Գրանցվել է ուսումնասիրվող տարածքի հարակից տարածքներում, Սևքար և Սարիգյուղի շրջանում:
4. Հոպոպ – *Upopa epops*: Պարբերաբար գրանցվել է տարածքում:
5. Ոսկեգույն մեղվակեր – *Merops apiaster*:
6. Սևագլուխ դրախտապան–*Emberiza melanociphola*: Գրանցվել է թփուտներում և փետրախոտային տափաստանում:
7. Մեծ ճուռակ– *Buteo buteo*: Հանդիպել է Սևքարից հարավ, անտառում:
8. Տափաստանային ճուռակ– *buteo rufus*:
9. Սովորական հողմավար բազե–*Falco naumanni*:
10. Սովորական կկու–*Coculus canorus*: Ճանաչվել է ձայնից:
11. Խայտաբղետ փայտփոր – *Dendrocopos medius*: Երկու անգամ հանդիպել է Սևքար գյուղի մոտակայքում՝ լայնատերև նոսր անտառում:
12. Սպիտակ խաղտոնիկ – *Motacilla alba*:
13. Ժուլան – *Lamius colluria*: Գրանցվել է թփուտների վրա:
14. Արշալուսիկ – *Erithacus rubecula*:
15. Սովորական կարմրատուտ – *Phoenicurus phoenicurus*: Գրանցվել է թփուտներում:
16. Սև կեռնեխ – *Turdus merula*:

17. Դիտարկվող շրջանում հանդիպել են շերտավոր մողես (*Lacerta strigata*) Ժայռային մողես (*Darevskia raddei*) և պղնձօձ (*Coronella austriaca*) և կանաչ դողոշ (*Bifoviridis*):

Անմիջապես գործունեության ենթակա և հարակից տարածքներում ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

### **5.10 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնության հուշարձաններ**

Գործունեության տարածքը գտնվում է Իջևանի «Դենդրոպարկի» տարածքում, որը որպես ԲՀՊՏ ընդգրկված է Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում, ինչի կողմից էլ իրականացվում է ԲՀՊՏ-ի պահպանությունը:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից Իջևանի ֆլորիստիկական շրջանում հայտնի են.

1) կենի հատապտղային – վտանգված տեսակ, պահպանվում է Ախնաբադի կենու պուրակում,

2) ձնծաղիկ ալպիական – վտանգված տեսակ է, աճում է Աչաջուր գյուղի շրջակայքում՝

3) ձնծաղիկ լագոդեխի, ոզնագլխիկ Տուրնեֆորի, պսեֆոլուս Դեբեդի, պարիլյակ բարձր, կոռն փետրավոր և թաղաղու դեղին – վտանգված տեսակներ են, աճում են Իջևան քաղաքի շրջակայքում,

4) շտերնբերգիա շնդեղածաղկային – վտանգված տեսակ է, աճում է Գետահովիտ գյուղի շրջակայքում,

5) արջտակ գարնանային – վտանգված տեսակ է, աճում է Աչաջուր և Գետահովիտ գյուղերի շրջակայքում

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից Իջևանի շրջանում հայտնի են.

1) նմանաձև ճպուռը և Յացենկո-Խմելևսկու առվակային գնայուկը – հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Իջևան քաղաքի շրջակայքում,

2) սոմխեթական չրխկանը և հայկական ծաղկեփոշեկերը – հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Իջևան քաղաքի շրջակայքում,

3) բրենթիս Ինո և ալկոն կապտաթիթեռ – հազվագյուտ տեսակներ են, հայտնի են միայն Իջևան քաղաքի շրջակայքում,

4) մարգագետնային մողես – խոցելի տեսակ է, սաղարթավոր անտառների անտառեզրերում և բացատներում,

5) կարմրատու բազե – անհետացող տեսակ է, բնաֆրում է նոսրանտառներում կամ անտառեզրերում,

6) գորշ արջ և խայտաքիս – խոցելի տեսակներ են, տարածված են հանրապետության գրեթե ամբողջ տարածքով:

Իջևանի ֆլորիստիկ շրջանում՝ Իջևան քաղաքի շրջակայքում աճում է Թաղու դեղին տեսակը [42]: Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 800–1000 մ բարձրությունների վրա, խոտածածկ լանջերին, անտառի եզրերին, կաղնու-բոխու անտառներում:

### 5.10.1 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

<<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N- 1059-Ա որոշման համաձայն Իջևանի անտառտնտեսության կազմում ներառված են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի 13.09.1958թ N 341 որոշմամբ ստեղծված «Արջատխլենի» (40 հա) և 19.04.1971թ N212 որոշմամբ ստեղծված «Իջևանի» (5908 հա) ու «Գանձաքարի» (6813 հա) արգելավայրերը:

«Իջևանի» արգելավայրը գտնվում է Իջևանի լեռնաշղթայի լանջերին՝ ծովի մակարդակից 900-2100 մ բարձրություններում, ստեղծվել է՝ անտառային լանդշաֆտների և կենդանիների (այծյամ, բժավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մայրեհավ և այլն) պահպանության նպատակով [41

Հիմնվելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից կատարված ուսումնասիրությունների վրա ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N1059-Ա որոշման համաձայն առաջարկվել է «Գանձաքարի», «Արջատխլենու» և «Իջևանի» արգելավայրերի միացումով ստեղծել «Իջևանի անտառային» արգելավայր (նկար 13-14): 2016 թվականին մշակվել է «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Իջևանի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Իջևանի» պետական արգելավայրի 2017-2021 թվականների կառավարման պլանի նախագիծը:

Համաձայն նախագծի՝ «Իջևանի» պետական արգելավայրի ստեղծման նպատակն է ՀՀ Տավուշի մարզի Աղստև գետի և դրա վտակներ Ուրթիջուրի և Սառնաջուրի ավազանների անտառային և մարգագետնային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության և պատմամշակութային եզակի հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները լեռնային անտառային էկոհամակարգերն են և դրանց բնորոշ հազվագյուտ և արժեքավոր բույսերը ու կենդանիները, ինչպես նաև ռելիկտային արջատխլենու պուրակը:

Արգելավայրի ընդհանուր տարածքը ընթացիկ չափագրմամբ զբաղեցնում է 13916 հա: «Իջևանի» արգելավայրի տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 17 կմ է, արևելքից արևմուտք՝ 15 կմ: Այն գտնվում է Գանձաքարի և Գետահովիտի գյուղական համայնքային, Իջևանի քաղաքային, ինչպես նաև Դիլիջանի քաղաքային համայնքում ներառված Հովք և Աղավնավանք գյուղական բնակավայրերի վարչական սահմաններում: Արգելավայրի տարածքը ներառում է 3 տեղամասեր. Իջևանի՝ 6997 հա, Գանձաքարի՝ 3277 հա և Խաչարձանի՝ 3642 հա:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է կենսաբազմազանության պահպանությանը վերաբերող Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիան, որի շրջանակներում ՀՀ տարածքում «Էմերալդ» ցանցի ստեղծման նպատակով առանձնացվել են բնապահպանական տեսակետից 23 արժեքավոր տարածքներ: Ներկայումս Հայաստանի Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքների նախնական ցանկը գտնվում է վերանայման փուլում:

AM 0000005 «Իջևան» տարածքում /որն ընդգրկում է Իջևանի և Արջատխլենու արգելավայրերը/ հանդիպում են Բեռնի կոնվենցիայի 6-րդ Բանաձևում ընդգրկված հետևյալ տեսակները.

- Բույսեր. *Echium russicum*, *Steveniella satyrioides*,
- Անողնաշարավորներ. *Callimorpha (Euplagia) quadripunctaria*, *Cerambyx cerdo*, *Rosalia alpine*,
- Սողուններ. *Emys orbicularis*, *Testudo graeca*,
- Թռչուններ. *Aquila chrysaetos*, *Aquila pomarina*, *Bubo bubo*, *Buteo rufinus*, *Caprimulgus europaeus*, *Ciconia nigra*, *Circaetus gallicus*, *Crex crex*, *Dendrocopos medius*, *Dryocopus martius*, *Emberiza hortulana*, *Falco peregrinus*, *Ficedula parva*, *Ficedula semitorquata*, *Gypaetus barbatus*, *Gyps fulvus*, *Hieraetus pennatus*, *Lanius collurio*, *Lullula arborea*, *Luscinia svecica*, *Milvus migrans*, *Neophron percnopterus*, *Pernis apivorus*, *Pyrrhocorax pyrrhocorax*,
- Կաթնասուններ. *Canis lupus*, *Lutra lutra*, *Lynx lynx*, *Myotis blythii*, *Myotis bechsteini*, *Miniopterus schreibersii*, *Rhinolophus ferrumequinum*, *Rhinolophus hipposideros*, *Ursus arctos*:

<<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N-1059-Ա որոշման համաձայն, Իջևանի դենդրոպարկը **որպես ԲՀՊՏ ընդգրկված է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում**, որի կողմից էլ իրականացվում է ԲՀՊՏ-ի պահպանությունը:

Իջևանի ծառայգի/դենդրոպարկը զբաղեցնում է 14,6 հա մակերես: Այն գտնվում է Իջևան քաղաքում, Աղստև գետի աջ ափին՝ գետի հին հունի տեղում, որը ծածկված է հողի շերտով: Իջևանի դենդրոպարկը հիմնադրվել է 1962 թվականին՝ Լյուդվիգ Սայադյանի կողմից:

Դենդրոպարկում է գտնվում առանձնահատուկ ուշադրության արժանի աշխարհում միակ արջատխլենու արահետը, կան հսկա սեյբաներ, վայրի լիմոնենիներ, վայրի խնձորենի: Դենդրոպարկում կա 650 ծառ ու թուփ, հազվագյուտ բույսեր և ծաղիկներ: Բույսեր կան բոլոր մայրցամաքներից՝ բացառությամբ Ավստրալիայի:



Իջևանի դենդրոպարկի լուսանկարներ



Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տեսակ է բնության հուշարձանը: ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածաշրջանի բնության հուշարձանների ցանկը: Համաձայն որոշման հավելվածի Տավուշի մարզում ցուցակագրված են հետևյալ երկրաբանական և կենսաբանական հուշարձանները (Հավելվածը խմբ.08.01.09 N 53-Ն) :

NN	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
----	-----------------------	-----------

ը/կ		
<b>Երկրաբանական հուշարձաններ</b>		
1.	«Մոլլաքար» ժայռ	Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում
2.	«Անանուն» պլազիոգրանիտներ	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառտնտեսության մոտ
3.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին
4.	«Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր	Տավուշի մարզ, Վարազաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ
5.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ
6.	«Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 2 կմ հվ
7.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի ձախ վտակի հովտում
8.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
9.	«Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրո-դիորիտներ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի կիրճի աջ լանջին
10.	«Անանուն» շերտագրական մերկացում	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
11.	«Անանուն» սանդղափուլ քարափներ	Տավուշի մարզ, Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ
12.	«Օձաքար» լեռնագագաթ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ հս-արմ, Վաղաշեն տանող ճանապարհի աջ կողմում
<b>Կենսաբանական հուշարձաններ</b>		
13.	«Նոյեմբերյանի սոսի»	Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Չինարաձորում
14.	«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, գ. Ակնաղբյուր, ծ.մ-ից 900 մ բարձրության վրա
15.	«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, գ. Սարիգյուղ, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ, ծ.մ-ից 750 մ բարձրության վրա
16.	«Գետահովիտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ձախ ափին, մոտ 700-800 մ բարձրության վրա
17.	«Տանձուտ»	Տավուշի մարզ, Աղավնավանք գյուղի մոտ

Դիտարկվող շրջանի ամենամոտ բնական հուշարձանը «Մոլլաքար» ժայռ-ն է, որը գտնվում է Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում:



## 5.10.2 Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Տավուշի մարզում Իջևանի տարածաշրջանում: Ստորև բերված են Տավուշի մարզի և Իջևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից<sup>1</sup>:

### Տավուշի մարզ

ՀՀ Տավուշի մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9.1%-ը (տարածքը՝ 270399 հա), 1 քառ. կմ-ի վրա ապրում է 50 մարդ: Մարզի բնակչությունը կազմում է 134.7 հազ. մարդ, որից 52.6 հազ. բնակվում են քաղաքներում:

Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդարդյունաբերությունը, քարամշակումն ու փայտամշակումը: Մարզում արտադրվում է բենտոփոշի, երեսապատման սալիկներ, գինիներ, պահածոներ և այլն: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ: Գյուղացիական տնտեսությունները զբաղվում են այգեգործությամբ, անասնաբուծությամբ, բուսաբուծությամբ, մեղվաբուծությամբ և 32 կերարտադրությամբ: Քաղաքի մուտքի մոտ է գտնվում Իջևանի գինու գործարանը: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը:

Մարզի բնությունը գեղատեսիլ է և հարուստ պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշադրյուրներ: Հատկանշական են Գոշավանքը, Հաղարծնի ու Մակարավանքի համալիրները, Տավուշի բերդը և այլն Տավուշի մարզում է գտնվում ՀՀ ամենախոշոր աղյուսակերտ եկեղեցին՝ Կիրանցի վանքը:

Մարզի կենտրոնով անցնում է Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 152.6կմ միջպետական, 274.9կմ հանրապետական և 380.6կմ տեղական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ:

Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.6%
- գյուղատնտեսություն՝ 4.6%,
- շինարարություն՝ 4.9 %,
- մանրածախ առևտուր՝ 1.1 %,
- ծառայություններ՝ 0.7%:

Մարզի բնակլիմայական պայմանները չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի ծավալման համար:

### Իջևան քաղաք

Մակերես՝ 43 կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 19356 (01.01.2021թ. դրությամբ);

<sup>1</sup> [www.armstat.am](http://www.armstat.am)

Մարզի վարչական կենտրոնն է: Անհիշելի ժամանակներից /չկա պատմական ստույգ տվյալ/ Հայաստանի մայրաքաղաք Դվինից-Թիֆլիս ձգվող քարավանային ճանապարհի վրա կառուցվել են քարավանների հանգստավայրեր /քարավանատներ/: Դրանցից մի քանիսն գտնվել են ներկայիս Իջևանի տեղում, Աղստևի աջ ու ձախ մասերում: Քաղաքով անցնում է Երևան-Թբիլիսի մայրուղին: Հողամասի փոխարեն անցնելով Ադրբեջանի տարածքով՝ Վրաստանի հետ կապ ունենալու համար կառուցվել է Իջևան-Բագրատաշեն մայրուղու նոր հատված: Հրազդան-Ղազախ հատվածում Երևան-Ղազախ երկաթուղային գիծը ուժի մեջ է միայն Իջևան կայարանից:

Ներկայումս քաղաքում գործում են 300 տեղանոց մշակույթի տունը, կերպարվեստի և երաժշտական դպրոցները, 5 հանրակրթական դպրոցներ՝ 3550 ընդհանուր աշակերտաքանակով, 1 վարժարան, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, որտեղ սովորում են 1000-ից ավելի ուսանողներ, „Մխիթար Գոշ», համալսարանի մասնաճյուղը, 2 քոլեջներ, մանկապարտեզներ, հիվանդանոց, պոլիկլինիկա և այլն:

Իջևանի տարածաշրջանը հայտնի է նաև իր պատմաճարտարապետական կոթողներով, որոնցից ամենահայտնին Մակարավանքն է: Այն կառուցվել է 10-13-րդ դարերում, գտնվում է Աչաջուր գյուղի մոտ՝ Իջևանից 10 կմ հեռավորության վրա: Տարածքի լեռներում բազմաթիվ են քարանձավները (Լաստիվեր՝ գյուղ Ենոքավան 3 կմ):

Իջևանը հարմարավետ վայր է ակտիվ հանգստի սիրահարների համար: Այստեղ կարելի է կազմակերպել ձիարշավներ, հետիոտնային, հեծանվային արշավներ, վրանային երեկոներ:

Իջևանը հայտնի է իր գորգագործությամբ: Այստեղ է գտնվում Անդրկովկասի ամենամեծ գորգագործական կոմբինատը, որը մեծ համբավ ուներ ողջ խորհրդային միությունում: Իջևանյան գորգագործության նմուշները այսօր ևս պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում: Իջևանը հայտնի է նաև իր գինիներով: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով:

Հին Քարվանսարան գտնվում էր ներկայիս Իջևան քաղաքից 10 կմ հարավ՝ Աղստևի ձախ ափին: Քաղաքի արևմտյան մասում է գտնվում 13-րդ դարում կառուցված Սուրբ Հովհաննես եկեղեցին:

## **6 . ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 6.1 Շինարարության փուլ**

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը վերլուծվում են հենապատի կառուցման շինարարական աշխատանքների /հողային և բետոնային աշխատանքներ/ ընթացքում, մասնավորապես՝ դիտարկվում են փոքրածավալ անօրգանական փոշու, ծխագազերի ժամանակավոր արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում և Աղստև գետի օգտագործվող հատվածում ջրային ռեսուրսի որակի վրա հնարավոր ազդեցություն:

Սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված և շատ փոքրածավալ՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական

աշխատանքների ծավալը և բնույթը: Գործունեության իրականացումը կարևոր է ինչպես բնապահպանական, այնպես էլ հնարավոր արտակարգ իրավիճակների կանխման տեսանկյունից:

### 6.1.2 Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

Հենապատի կառուցման աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում են ժամանակավոր ազդեցություններ, պայմանավորված՝ գետափնյա մասում՝ գետի հունում հողային և բետոնային աշխատանքների իրականացմամբ /որը ներառում է 150 խմ ծավալով գրունտի հանույթի աշխատանքներ և 50մ երկարությամբ, 2 մ բարձրությամբ բետոնյա հենապատի կառուցման աշխատանքներ/: Նշված աշխատանքները կարող են ուղեկցվել անօրգանական փոշու արտանետումներով և շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում ծխազագերի արտանետումներով: Շինարարության ընթացքում արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի տարածքի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով դրանց արագ նստելու հատկությունը և գետափնյա տարածքի խոնավությունը: Քանի որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են գետափնյա խոնավ միջավայրում, անօրգանական փոշուարտանետումներ չեն առաջանա: Հետևաբար, արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը:

Մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական միջոցառումների ծրագրում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի ճանապարհների փոշենստեցման գործողություններ, որտեղով հենապատի կառուցման համար անհրաժեշտ շինանյութերը՝ պատրաստի բետոնը կտեղափոխվեն:
- շինարարական մեքենաների երթևեկությունը /որը կիրականացվի 3 մեքենայով 30 երթով՝ օրեկան 5 երթով տեղափոխելով 300խմ բետոն/ կկազմակերպվի ժամանակացույցով, համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ 30կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ,
- փոշի առաջացնող սորուն նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում չեն պահեստավորվելու և անհրաժեշտության դեպքում գործունեության տարածք կբերվեն պաստառներով ծածկված վիճակում,
- մեքենաները տարածք կմտնեն անվաղողերը մաքրված, լվացված և տեխնիկապես կարգավորված ու ստուգված վիճակում՝ հնարավոր արտահոսքերը կախարգելելու համար,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը՝ վառելիքաքսուկային յուղերի և նավթամթերքների հնարավոր արտահոսքերը Աղստև գետ կանխարգելելու նպատակով:

Մթնոլորտային օդի աղտոտվածության կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումների առավել մանրամասն ցանկը ներկայացված է *ԲԿՊ-ում*

### 6.1.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում և կանոնավոր կերպով կհսկվի դենդրոպարկի տարածք մտնելուց առաջ վերջիններիս տեխնիկական վիճակը, իսկ անսարքությունների հայտնաբերման դեպքում կիրականացվեն համապատասխան միջոցառումներ:

Սոցիալական ազդեցությունների մեղմացման տեսանկյունից հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն կեսօրվա ժամերին, այն է՝ ժամը 14:00-ից 18:00:

Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ-ում թրթռումների գործող նորմերին, քանի որ շինարարության ընթացքում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին: Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումների առավել մանրամասն ցանկը ներկայացված է *ԲԿՊ-ում*

#### 6.1.4 Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է ճանապարհի ջրցանման համար, որտեղով տեղափոխվելու է հումքը, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման համար, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Հողային աշխատանքների համար ջրօգտագործման ծավալներ չեն հաշվարկվել, քանի որ հողային աշխատանքների ժամանակ գրունտը հանվելու է գետափնյա խոնավ տարածքներից;

*Բեփոնային հենապարի* կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած փոշու մակարդակները և դրանց հնարավոր տարածման ոլիսկերը կկառավարվեն իրականացնելով փոշեգոյացնող մակերեսների կանոննավար ջրցանում:

*Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ ընդհանուր 200 ք.մ

K – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 խ.մ,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝

22 օր x 3 ամիս = 66 օր

K<sub>1</sub>– ջրցանի օրական քանակը՝ 2

Այսպիսով՝  $V = 200 \times 0.0015 \times 66 = 19.8$  խ.մ /շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 19.8 խ.մ:

Ջրցանի հաշվարկները կատարված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում: Ջրցանի միջոցառումները հրապարակում կկատարվեն պատշաճ մակարդակով՝ կանոնավոր և հաշվարկված ջրցանի ցուցանիշների շրջանակում՝ բացառելով հոսքաջրերի առաջացումը:

*Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$$W = (n \times N + n_1 \times N_1) T$$

որտեղ՝

$n$  - աշխատողների և ծառայողների թիվն է՝ 3 մարդ

$N$  - ջրածախսի նորման՝ 0.016 խ.մ,

$n_1$  - բանվորների թիվն է՝ միջին 17 մարդ

$N_1$  - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 խ.մ /մարդ օր

$T$  - աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում՝ 22 օր x 3 ամիս = 66 օր :

Այսպիսով՝  $W = (3 \times 0.016 + 17 \times 0.025) \times 66 = 31.2$  խ.մ/ շինարարություն ժամանակ:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի նախագծվող տարածքում առկա ջրագծից, որը սպասարկում է տարածքի հարևանությամբ գտնվող Իջևանի գինու գործարանին:

Շին. հրապարակը նախատեսվում է ապահովել բիոզուգարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնիտաժը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների հիման վրա:

### 6.1.5 Ջրային համակարգերի վրա ազդեցություն և կանխարգելիչ միջոցառումներ

Աղստև գետի աղտոտումը պայմանավորված է բետոնյա հենապատի կառուցման հողային և բետոնյա աշխատանքների իրականացմամբ և գետի վրա հնարավոր ազդեցությունները կապված են հետևյալի հետ.

- վառելիքի ու յուղերի պատահական արտահոսքեր,
  - շինհրապարակից հեռացվող արտահոսքեր,
  - հանված գրունտի հեռացում,
  - շինհրապարակում առաջացող շինարարական աղբ և կոշտ կենցաղային թափոններ: Նշված ազդեցությունները կարող են հանգեցնել ջրային ռեսուրսում ջրի որակի վատացման և աղտոտվածության ավելացման:
- Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցությունները ջրային համակարգերի /Աղստև գետ/ կանխարգելելու նպատակով նախատեսված է՝
- կեղտաջրերի (բետոնաջուր՝ բետոնախառնիչների վազումից) հեռացման համար հրապարակում պահել կեղտաջրերի հեռացման տարա ( $\geq 10$  խ . մ), որտեղ կհեռացվեն կեղտաջրերը,
  - կեղտաջրերը պահել հերմետիկ բաքերում՝ պատշաճ եղանակով տեղափոխելու համար,
  - տեղումների ընթացքում հնարավոր հոսքաջրերի առաջացման դեպքում վերջիններս հեռացնել տարայում կամ ուղղորդել տեղամասին կից քաղաքային հեղեղատար,
  - հանված գրունտը ժամանակավոր պահեստավորել գետի ջրածածկից դուրս տարածքում,
  - ապահովել վտանգավոր թափոնների /վառելիք ու յուղեր/ շինհրապարակում անվտանգ պահման գործողությունները, պահելով դրանք հատուկ տարողություններում՝ գետից հնարավորինս հեռու,
  - շինհրապարակում առաջացող շինարարական աղբ և կոշտ կենցաղային թափոնները հեռացնել սահմանված կարգով, թափոնների աղբամանները տեղադրել գետի ջրածածկման տարածքներից դուրս:

### 6.1.6 Թափոնների առաջացում և կառավարում

Տարածքում աղբահեռացումը կատարվում է կանոնավոր, աղբահանության նպատակով տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 0.1 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր և 10 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/՝ ամբողջությամբ տեղափոխվելու է Իջևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում ավելորդ գրունտ չի առաջանա, քամի որ 150 խմ ծավալով հանվող գրունտը ամբողջությամբ օգտագործվելու է հետադարձ լիցքի համար:

Շինարարության ողջ ընթացքում Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քայուղման գործողությունները հնարավորինս կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի հրապարակում նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը:

Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերված է ԲԿՊ-ի համապատասխան բաժնում:

### 6.1.7 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները /չնայած դրանք շատ փոքրաքանակ և փոքրածավալ են/ մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 14:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են ԲԿՊ-ում, մասնավորապես՝ կիրականացվի կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

#### Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները

Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենա-սարքավորումների շարժով պայմանավորված ոչ էական դիտարկվող երթևեկության ծանրաբեռնվածություններ: Հաշվի առնելով, որ աշխատանքներն իրականացվելու են Իջևան քաղաքում, հնարավոր ազդեցությունները կմեղմացվեն հետևյալ միջոցառումներով: Շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժը կազմակերպել ժամանակացույցով, սահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ):

### 6.1.8 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ
- անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից և վերոնշյալ ռիսկերից խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

